Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 3 - 1 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
Դ. Ռ. Գալոյան
21 դեկտեմբերի 2022 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) ակադեմիական կազմի տարեկան գործունեության գնահատման նպատակները, ընթացակարգը և չափանիշները:
2. Սույն կարգի ներդրման նպատակներն են՝
   1) ընդհանուր նպատակներ՝
      ա. համալսարանի ակադեմիական կազմի (այսուհետ՝ ԱԿ) գործունեության որակի և արդյունավետության գնահատումը,
      բ. համալսարանի կրթական, գիտահետազոտական և այլ գործունեությունից ներքին շահակիցների բավարարվածության վերլուծությունը,

գ. ԱԿ կազմի մասնագիտական աճին նպաստելը,

դ. ԱԿ շահադրդվածության աստիճանի բարձրացմանը և համալսարանին աշխատակցելու գրավչությանը նպաստելը,

ե. ԱԿ գործունեության հաշվետվողականության բարձրացումը,

զ. վերհանված բացերը շտկելուն և գործունեության բարելավմանն ուղղված նպատակային վերապատրաստման կամ կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ որոշումների կայացումը.

2) կազմակերպական նպատակներ՝

ա. ԱԿ-ի ներկայացուցչի հետ երկարաժամկետ (մինչև 5 տարի տևողությամբ) աշխատանքային պայմանագիր կնքելու կամ պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումների կայացումը,

բ. ԱԿ-ի ներկայացուցիչների նկատմամբ խրախուսանք կիրառելու կամ խրախուսանքի չափը տարբերակելու վերաբերյալ որոշումների կայացումը:

3. Որպես ԱԿ-ի գործունեության գնահատման ենթակա ուղղություններն են՝

1) ուսումնական գործունեություն.

2) հետազոտական և մեթոդական գործունեություն.

3) հասարակական և կազմակերպական գործունեություն:

4. Գնահատման ենթակա են ինչպես համալսարանի հիմնական ԱԿ ներկայացուցիչները, այնպես էլ ներքին և արտաքին համատեղողները:

5. Դասախոսի ուսումնական գործունեության գնահատումն իրականացվում է՝

1) անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) գնահատման արդյունքների հիման վրա.

2) ուսանողական հարցման տարեկան արդյունքների հիման վրա.

3) UMS և Moodle համակարգերում սահմանված գործողությունների մշտադիտարկման, ինչպես նաև դասացուցակային գրաֆիկի կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողության արդյունքների հիման վրա:

6. Դասախոսի հետազոտական և մեթոդական գործունեության, ինչպես նաև հասարակական և կազմակերպական ներգրավվածության գնահատումը կատարվում է այդ ոլորտների վերաբերյալ դասախոսի հաշվետվության տվյալների գնահատման հիման վրա:

7. Դասախոսի հետազոտական և մեթոդական գործունեության գնահատումը կատարվում է ըստ հետևյալ հինգ բաղադրիչների՝

1) հետազոտական նախագծերի մասնակցության գնահատում՝ ըստ տեսակի (միջազգային, ներպետական, բուհական) և ըստ կարգավիճակի (ղեկավար, մասնակից).

2) մեթոդական գործունեության գնահատում, օրինակ՝ մասնակցություն նոր կրթական ծրագրերի մշակման աշխատանքներին, ուսումնական ձեռնարկի պատրաստում և հրատարակում, նոր դասընթացի և դրա ծրագրի մշակում և իրականացում.

3) հրատարակությունների՝ ըստ տեսակի, կարգավիճակի, հրատարակման վայրի և լեզվի.

4) զեկուցումների գիտաժողովներում և սեմինարներում՝ ըստ տեսակի (միջազգային, ներպետական, բուհական).

5) հետազոտական կամ մասնագիտական այլ գործունեության՝ ատենախոսության պաշտպանություն, գրախոսություններ և այլ:

8. Դասախոսի հասարակական և կազմակերպական ներգրավվածության գնահատումը կատարվում է ըստ հետևյալ երկու բաղադրիչների՝

1) աշխատանք հանձնաժողովներում՝ ըստ մակարդակների (ամբիոնային, ֆակուլտետային, համալսարանական, ինչպես նաև պետական).

2) այլ հանրային գործունեության՝

ա. մասնակցություն համալսարանի և նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին,

բ. մասնակցություն դիմորդների կողմնորոշման և ուսանողների հավաքագրման աշխատանքներին,

գ. հանրության շրջանում համալսարանի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն,

դ. մասնակցություն միջազգային փոխանակային ծրագրերին:

2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Ուսումնական գործունեության գնահատումը (ընդհանուր գնահատականի 50%-ը) ներառում է՝

1) ամբիոնի վարիչի գնահատումը դասախոսի տարեկան ուսումնական գործունեության վերաբերյալ՝

ա. յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին համապատասխան ամբիոնի վարիչը ստանում է սահմանված ձևաչափի հարցաթերթ (N 2 ձևը կցվում է), ըստ որի կատարում է դասախոսի նախորդ տարվա ուսումնական գործունեության գնահատումը,

բ. ամբիոնի վարիչը, ըստ դասախոսի կատարողականի գնահատման համար սահմանված չափանիշների և ցուցանիշների, իրականացնում է գնահատումը՝ հիմնվելով նախորդ ակադեմիական տարում դասախոսի ուսումնական գործունեության արդյունքների վրա,

գ. ամբիոնի վարիչի գնահատումը կազմում է ուսումնական գործունեության ընդհանուր գնահատման 40%-ը.

2) UMS և Moodle հարթակներում սահմանված գործողությունների գնահատումը՝

ա. UMS և Moodle համակարգերում սահմանված գործողությունների՝ հաստատված ձևաչափերին և վերջնաժամկետներին համապատասխանության և դասացուցակային գրաֆիկի կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքների գնահատումն իրականացվում է կենտրոնացված կարգով՝ ակադեմիական տարվա ընթացքում գրանցված տվյալների հիման վրա,

բ. UMS և Moodle համակարգերում գործողությունները սահմանող մեթոդական ցուցումները խմբագրվում, փոփոխվում և դասախոսներին են առաքվում յուրաքանչյուր ակադեմիական տարվա սկզբին,

գ. UMS և Moodle համակարգերում սահմանված գործողությունների գնահատումը կազմում է դասախոսի ուսումնական գործունեության ընդհանուր գնահատման 20%-ը.

2) ուսանողների գնահատումը՝

ա. ուսանողների գնահատումներն իրականցվում են «Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման ընթացակարգի» համաձայն,

բ. ուսանողների գնահատումը կազմում է դասախոսի ուսումնական ընդհանուր գնահատման 40%-ը:

10. Հետազոտական, մեթոդական, հասարակական և կազմակերպական գործունեության գնահատումը (ընդհանուր գնահատականի 50%-ը)՝

1) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին դասախոսը, ըստ գնահատման ենթակա ուղղությունների, պատրաստում է սահմանված ձևաչափի տարեկան հաշվետվություն հետազոտական, մեթոդական, հասարակական և կազմակերպական գործունեության վերաբերյալ (N 1 ձևը կցվում է) և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի

փաթեթի՝ հավաքապանակի հետ միասին վերբեռնում համալսարանի Moodle համակարգ.

2) հետազոտական և մեթոդական գործունեության գնահատականը կազմում է ընդհանուր գնահատման 40%-ը.

3) հասարակական և կազմակերպական գործունեության գնահատականը կազմում է ընդհանուր գնահատման 10%-ը:

11. Տարբեր գնահատողների գնահատման արդյունքները գործունեության ոլորտներից յուրաքանչյուրում (ուսումնական գործունեություն, հետազոտական և մեթոդական գործունեություն և հասարակական աշխատանք) ամփոփվում են մեկ համալիր ցուցանիշում:

12. Գնահատման արդյունքները և գործունեության բարելավման միջոցառումների ծրագիրը (հաջորդ ակադեմիական տարում գործունեության բարելավմանը միտված՝ ամբիոնի վարիչի և դասախոսի համատեղ կազմած գործողությունների պլանը) քննարկվում և հաստատվում են ամբիոնի նիստում:

13. Դասախոսի գործունեության երեք հիմնական ոլորտներում (ուսումնական գործունեություն, հետազոտական և մեթոդական գործունեություն, հասարակական ու կազմակերպական գործունեություն) գնահատման արդյունքում ստացված միավորները բազմապատկվում են գնահատման քաշային գործակիցներով և գումարվում.

$$ΣԳ = Գուսում. \times Ք1 + Գհետազ. \times Ք2 + Գհաս. \times Ք3,$$

որտեղ՝

Գ-ն՝ ոլորտային գնահատման միավորն է,

Ք-ն՝ քաշային գործակիցը:

Ձև N 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Նախորդ ակադեմիական տարում մշակված, առաջարկված և իրականացված հետազոտական (դրամաշնորհային) նախագծերը.

ա) ֆինանսավորված նախագծեր (_____ միավոր)

Նախագծի անվանումը, նպատակը և հիմնականխնդիրները, արդյունքները և այլն		Ֆինանսավորող կազմակերպությունը	Մեկնարկը	Ավարտը	Կարգավիճակը	Պաշտոնը	Ծավալը (մլն ՀՀ դրամ)
Միջազգային միավոր							
ղեկավար	10						
անդամ	5						
Հանրապետական միավոր							
	6						
	3						
Բուհական միավոր							
	4						
	2						

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախորդ ակադեմիական տարում իրականացված մեթոդական աշխատանքները.

Գործունեության տեսակը	Նկարագրությունը	Միավոր
Դասագիրք մակագրով		10
Մասնակցություն նոր կրթական ծրագրերի մշակման աշխատանքներին	ղեկավար	9
	անդամ	5
Դասախոսությունների տեքստերի պատրաստում և հրապարակում		6

Ուսումնական ձեռնարկիպատրաստում և հրատարակում		7
Նոր դասընթացի և դրա ծրագրի մշակում և իրականացում		5
Գործնական աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի պատրաստում և հրապարակում		4
Մասնակցություն վերապատրաստումների		2

3. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախորդ ակադեմիական տարվա հրապարակումները.

Դասա-կարգումը	Հրատարակությունները	Կարգա-վիճակը

Գնահատման միավորներ

Հրապարակման տեսակ	Միավոր
ՍՎ 1 - Գիտական հոդված Scopus և (կամ) Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում (մեկ հեղինակ)	6-10
ՍՎ 2 - Գիտական հոդված Scopus և (կամ) Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում (երկու համահեղինակ)	4-8
ՍՎ 3 - Գիտական հոդված Scopus և (կամ) Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում (երեք և ավելի համահեղինակ)	3-7
ՌՑ 1 - Գիտական հոդված РИНЦ-ի միջուկում (ядро) ընդգրկված ամսագրերում (մեկ հեղինակ)	6
ՌՑ 2 - Գիտական հոդված РИНЦ-ի միջուկում (ядро) ընդգրկված ամսագրերում (երկու համահեղինակ)	5
ՌՑ 3 - Գիտական հոդված РИНЦ-ի միջուկում (ядро) ընդգրկված ամսագրերում (երեք և ավելի համահեղինակ)	4
ԱԳ 1 - Գիտական հոդված РИНЦ-ում ընդգրկված կամ արտերկրի այլ ազդեցության գործակցով (Index Copernicus և այլն) ամսագրերում (մեկ հեղինակ)	5
ԱԳ 2 - Գիտական հոդված РИНЦ-ում ընդգրկված կամ արտերկրի այլ ազդեցության գործակցով (Index Copernicus և այլն) ամսագրերում (երկու համահեղինակ)	4
ԱԳ 3 - Գիտական հոդված РИНЦ-ում ընդգրկված կամ արտերկրի այլ ազդեցության գործակցով (Index Copernicus և այլն) ամսագրերում (երեք և ավելի համահեղինակ)	3

ԳՐ 1 - Գիտական հոդված գրախոսվող հանդեսում (մեկ հեղինակ)	3
ԳՐ 2 - Գիտական հոդված գրախոսվող հանդեսում (երկու համահեղինակ)	2
ԳՐ 3 - Գիտական հոդված գրախոսվող հանդեսում (երեք և ավելի համահեղինակ)	1
ՄԳԱ 1 - Scopus և Web of Science շտեմարաններում ինդեքսավորվող մենագրություն (մեկ հեղինակ)	10
ՄԳԱ 2 - Scopus և Web of Science շտեմարաններում ինդեքսավորվող մենագրություն (երկու համահեղինակ)	8
ՄԳԱ 3 - Scopus և Web of Science շտեմարաններում ինդեքսավորվող մենագրություն (երեք և ավելի համահեղինակ)	6
ՄԳԲ 1 - Արտերկրում օտար լեզվով հրապարակված մենագրություն (մեկ հեղինակ)	8
ՄԳԲ 2 - Արտերկրում օտար լեզվով հրապարակված մենագրություն (երկու համահեղինակ)	6
ՄԳԲ 3 - Արտերկրում օտար լեզվով հրապարակված մենագրություն (երեք և ավելի համահեղինակ)	5
ՄԳ 1 - Մենագրություն (մեկ հեղինակ)	6
ՄԳ 2 - Մենագրություն (երկու համահեղինակ)	5
ՄԳ 3 - Մենագրություն (երեք և ավելի համահեղինակ)	3

4. ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԵՄԻՆԱՐՆԵՐՈՒՄ

Նախորդ ակադեմիական տարում տարբեր գիտաժողովներում, աշխատաժողովներում և սեմինարներում կատարված զեկուցումների համառոտ նկարագրությունը.

Թեման/վերնագիրը և համառոտ նկարագրությունը	Ամսաթիվը	Վայրը	Կարգա-վիճակը

Գնահատման միավորներ

Գիտաժողովի կարգավիճակ	Միավոր
Մ - Միջազգային	5
Հ - Հանրապետական	3
Բ - Բուհական	1

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախորդ ակադեմիական տարում հետազոտական և (կամ) մասնագիտական գործունեությունը հետևյալ ոլորտներում.

Գործունեության տեսակը	Նկարագրությունը	Միավորը
Ատենախոսությունների, մենագրությունների, դասագրքերի գրախոսություններ		2
Դոկտորական ատենախոսության պաշտպանություն		7
Թեկնածուական ատենախոսության պաշտպանություն		5
Հոդվածների գրախոսություններ		0.5
Անդամակցություն մասնագիտական ընկերակցություններին/ կազմակերպություններին		0.5

6. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Ներկայացրեք նախորդ ակադեմիական տարում տարբեր հանձնաժողովներում Ձեր կատարած աշխատանքը.

Հանձնաժողովի անվանումը	Կիսամյակը	Հիմնական գործունեությունը և ներդրումը	Մակարդակը	Կարգա-վիճակը

Գնահատման միավորներ

Հանձնաժողովի մակարդակը	Միավորը
Ա - Ամբիոնային	1
Ֆ - Ֆակուլտետային	2
Հ - Համալսարանական	3
Հ - Այլ (պետական և այլն)	4

7. ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախորդ ակադեմիական տարում հասարակական կամ կազմակերպական գործունեությունը համալսարանում.

Գործունեության տեսակը	Նկարագրությունը	Միավորը
Մասնակցություն համալսարանի և նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին		5
Մասնակցություն դիմորդների կողմնորոշման և ուսանողների հավաքագրման աշխատանքներին		3
Հանրության շրջանում համալսարանի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն		3
Մասնակցություն միջազգային փոխանակային ծրագրերին		3
Ֆակուլտետում ուսանողների փոխանակման ծրագրերի համակարգում		4
Մասնագիտական հանդեսի գլխավոր խմբագիր կամ խմբագրի տեղակալ, խմբագրակազմի անդամ		2

ՁԵՎ N 2

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ

5 նշում՝ գերազանց, 4 նշում՝ բարձր, 3 նշում՝ միջին, 2 և 1 նշում՝ ցածր

Գործընթացը	Գնահատականը
Բոլոր դասընթացների համար համակարգված և մանրամասն օրացուցային պլանի առկայություն	
Խորհրդատվության համար հասանելիություն ուսանողներին՝ ըստ առարկայական ծրագրով սահմանված ժամանակացույցի	
Դասագրքի, ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների տեքստերի, գործնական/լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ լրացուցիչ ուսումնական նյութերի պատրաստում և տրամադրում ուսանողներին	
Դասավանդման նորարարական մեթոդների կիրառում	
Նոր մշակված կամ զգալիորեն արդիականացված դասընթաց(ներ)ի առկայություն	
Դասավանդման գործընթացում հետազոտության արդյունքների կիրառում	
Պատշաճ մասնակցություն ամբիոնային աշխատանքներին (նիստեր, թեմատիկ քննարկումներ և այլն)	
Միջին գնահատականը	